ՆԱԽՆԱԿԱՆ ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԻ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄ

2025

ԱՆԱՄՆԱԲՈՒԺՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 1

ԽՄԲԻ ՀԱՄԱՐԸ

ՆՍՏԱՐԱՆԻ ՀԱՄԱՐԸ

Հարգելի՛ ուսուցիչ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք: Եթե չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք դրան անդրադառնալ ավելի ուշ:

Թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը կարող եք օգտագործել սևագրության համար:

1 **Ի՞նչ է թերապևտիկ լայնությունը:**

1) դոզաների միջակայքն է՝ միջին թերապևտիկից մինչև մահացու /լետալ/ դոզան
2) դոզաների միջակայքն է՝ նվազագույն թերապևտիկից մինչև նվազագույն տոքսիկը
3) դոզաների միջակայքն է՝ միջին թերապևտիկից մինչև նվազագույն թունավորը
4) դոզաների միջակայքն է՝ առավելագույն թերապևտիկից մինչև առավելագույն թունավորը

2 **Ի՞նչ է բորբոքումը:**

1) օրգանիզմի բարդ հումորալ ռեակցիան է վնասվածքի նկատմամբ, որն արտահայտվում է անոթների տեղային խանգարումների համալիրով
2) տեղային նյութափոխանակության խանգարում է, որն առաջանում է հյուսվածքների վնասման հետևանքով
3) բարդ քիմիական պրոցես է, որը զարգանում է վնասված հյուսվածքներում
4) օրգանիզմի բարդ ռեֆլեկտոր ռեակցիան է վնասվածքի նկատմամբ, որն արտահայտվում է տեղային և ընդհանուր փոփոխությունների համալիրով

3 **Բազմաշերտ տափակ էպիթելով մաշկի ո՞ր շերտն է ձևավորվում:**

1) պտկիկային
2) ցանցային
3) դերմա
4) էպիդերմիս

4 **Որքա՞ն է տևում մաքիի հղիությունը:**

1) 2 ամիս
2) 4 ամիս
3) 3 ամիս
4) 5 ամիս

5 **Նշվածներից ո՞րը հելմինթոօվոսկոպիկ մեթոդ *չէ:***

1) Վայդի
2) Բերմանի
3) Տրիխինելոսկոպիայի
4) Ֆյուլեբոռնի

6 **Ինչպե՞ս է կոչվում հաստ աղիքներում կերազանգվածի կանգը:**

1) հեմոստազ
2) լիմֆոստազ
3) խիմոստազ
4) կոպրոստազ

7 **Նշված հորմոններից ո՞րն է արտադրվում մակերիկամի ուղեղային շերտում:**

1) ադրենալին
2) ալդոստերոն
3) կորտիզոն
4) տեստոստերոն

8 **Ի՞նչ է տեղի ունենում սիմպաթիկ նյարդային համակարգի գրգռման դեպքում:**

1) աչքի բբի նեղացում
2) սրտի աշխատանքի դանդաղում
3) ստամոքսի հյութազատության նվազում
4) ադրենալինի արտադրության նվազում

9 **Նշել որոճողների կրծքային վերջավորությունների հոդերի տեղադրման ճիշտ հաջորդականությունը:**

1.արմունկ, 2.կապ, 3.պսակ, 4.դաստակ

1) 1, 2, 3, 4
2) 2, 1, 4, 3
3) 1, 4, 2, 3
4) 4, 2, 3, 1

10 **Ի՞նչ է արյունուռուցքը /հեմատոման/:**

1) հյուսվածքների մեխանիկական վնասվածք է, որի դեպքում տեղի է ունենում արյունազեղում և արյունով լցված խոռոչի գոյացում
2) մաշկի և ենթամաշկային բջջանքի փակ վնասվածքն է, որի դեպքում պատռվում են արյունատար և ավշային անոթները և գոյանում են արյունուռուցքներ
3) ավշային անոթի պատռվածքից գոյացած ավշի կուտակումն է, որի դեպքում պահպանված է մաշկի ամբողջականությունը
4) հյուսվածքների ներծծումն է շճային էքսուդատով, առանց մաշկի ամբողջականության խախտման

11 **Ինչպիսի՞ բիլիռուբին է հայտնաբերվում մեխանիկական դեղնախտի դեպքում:**

1) անուղղակի
2) ուղղակի
3) բիլիվերդին
4) ուղղակի և անուղղակի

12 **Ի՞նչ է պնևմոթորաքսը:**

1) թոքամիզի բորբոքում
2) թոքամիզի ջրգողություն
3) թոքամիզում օդի կուտակում
4) թոքամիզում արյան կուտակում

13 **Ինչպե՞ս է կոչվում արգանդի շճային թաղանթի բորբոքումը:**

1) էնդոմետրիտ
2) միոմետրիտ
3) պերիմետրիտ
4) պարամետրիտ

14 **Տվյալ ցեղի մայրերի կենդանի զանգվածի քանի՞ տոկոսի ձեռք բերման դեպքում է կենդանին համարվում մարմնապես հասուն:**

1) 50%
2) 70%
3) 30%
4) 20%

15 **Ինչպե՞ս է կոչվում ստամոքսի լորձաթաղանթի բորբոքումն:**

1) կոլիտ
2) էնտերիտ
3) մետրիտ
4) գաստրիտ

16 **Նշվածներից ո՞րը *չի* համարվում սրտի հիվանդությունների ախտորոշման եղանակ:**

1) ռադիոլոգիական
2) ուլտրաձայնային
3) էնդոսկոպիկ
4) գրաֆիկական

17 **Ինչպե՞ս է կոչվում հաճախակի միզարտազատումը:**

1) օլիգուրիա
2) անուրիա
3) պոլիուրիա
4) պոլակիուրիա

18 **Ինչպիսի՞ աղմուկներն են հայտնաբերվում ներսրտենու բորբոքման ժամանակ:**

1) պերիկարդիալ
2) էնդոկարդիալ
3) պլևրալ
4) կարդիոպուլմոնալ

19 **Ի՞նչ է իրենից ներկայացնում խոլանգիտը:**

1) լեղապարկի բորբոքում
2) լեղածորանների բորբոքում
3) լեղաքարերի առաջացում
4) լեղածորանների ուռուցք

20 **Ի՞նչ է ցույց տալիս էրիթրոցիտների օսմոտիկ կայունությունը:**

1) էրիթրոցիտների կյանքի տևողությունը
2) ոսկրածուծի ֆունկցիոնալ կարողությունը
3) լեյկոցիտների ակտիվությունը
4) էրիթրոցիտների ակտիվությունը

21 **Նշվածներից որո՞նք են մեղուների մակաբուծային հիվանդությունները: (3 միավոր)**

1. ասպերգիլոզ
2. ասկոսֆերոզ
3. վիրուսային կաթված
4. նոզեմատոզ
5. ակարապիդոզ
6. վարոատոզ
7. հաֆնիոզ
8. պիեմիա
9. ամեբիոզ

22 **Նշված եղանակներից որո՞վ կարելի է ախտորոշել վարակիչ հիվանդությունները:(3 միավոր)**

1. ֆունկցիոնալ
2. ուլտրաձայնային
3. շիճուկաբանական
4. վիրուսաբանական
5. գծագրական
6. շոշափման
7. մանրէաբանական
8. գործիքային
9. ռենտգենաբանական

23 **Նշվածներից որո՞նք են կենդանիներից մարդուն փոխանցվող հիվանդությունները: (3 միավոր)**

1. կատաղություն
2. սիբիրախտ
3. աֆրիկյան ժանտախտ
4. խշխշան պալար
5. բրադզոտ
6. ոչխարների ծաղիկ
7. ոչխարների ինֆեկցիոն կատառային տենդ
8. լեպտոսպիրոզ
9. լիստերիոզ

24 **Նշվածներից որո՞նք են դեղանյութերի ներմուծման էնտերալ ուղին: (3 միավոր)**

1. բերանային
2. ենթալեզվային
3. ենթամաշկային
4. ուղիղ աղիքային
5. վերմաշկային
6. ներերակային
7. ներզարկերակային
8. ներսրտային
9. ներմկանային

25 **Նշվածներից ո՞ր 3 հիվանդություններն են հողային ինֆեկցիա: (3 միավոր)**

1. գազային գանգրենա
2. կարկամախտ
3. դաբաղ
4. խոզերի կարմրախտ
5. գեղձատապ
6. բոտուլիզմ
7. սպունգանման հիվանդություն
8. բրուցելոզ
9. ժանտախտ

26 **Ընտրել խշխշան պալարին բնորոշ մսեղիքի հետ վարվելու 3 ճիշտ պնդումները: (3 միավոր)**

1. Հիվանդ կենդանուն սպանդի *չեն* ենթարկում:
2. Հիվանդ կենդանուց ստացված մսեղիքը օգտահանում են այրելու միջոցով:
3. Մսեղիքը օգտագործում են 2 ժամ ջերմային մշակումից հետո:
4. Մսեղիքը օգտագործում են 30 օր խորը սառեցումից հետո:
5. Մսեղիքը ուղարկում են վերամշակող ձեռնարկություն:
6. Կատարում են նմուշառում և ուղարկում լաբորատորիա:
7. Մսեղիքը օգտագործում են առանց սահմանափակումների:
8. Մսեղիքը օգտագործում են ախտահարված հատվածները հեռացնելուց հետո:
9. Մսեղիքը ապխտում են:

27 **Որո՞նք են միզային համակարգի հիվանդությունների համախտանիշները: (3 միավոր)**

1. ուրեմիկ
2. կոլիկներ
3. հեպատոլինեալ
4. դեղնախտ
5. այտուցային
6. նեյտրոֆիլիա
7. հեպատոտոքսիկ
8. միզային
9. էոզինոֆիլիա

28 **Նշվածներից որո՞նք են լեյկոցիտների տեսակները: (3 միավոր)**

1. լիմֆոցիտ
2. մոնոցիտ
3. պոյկիլոցիտ
4. էոզինոֆիլ
5. անիզոցիտ
6. հեպատոցիտ
7. ֆիբրոբլաստ
8. ռետիկուլոցիտ
9. մակրոֆագ

29 **Նշել կենտրոնական նյարդային համակարգը գրգռող դեղամիջոցները: (3 միավոր)**

1. ստրիխնին
2. պարացետամոլ
3. կոֆեին
4. ցեֆտրիաքսոն
5. լիդոկային
6. կորդիամին
7. նովոկային
8. անալգին
9. անեսթեզին

30 **Նշել կրուպոզ պնևմոնիային բնորոշ 3 ախտանշանները: (3 միավոր)**

1. կայուն տենդ
2. ընդմիջվող տենդ
3. պլևրալ աղմուկների առկայություն
4. էնդոկարդիալ աղմուկ
5. խառը հևոց
6. արտաշնչական հևոց
7. թոքերում բթացման մեծ օջախների առկայություն
8. թոքերում բթացման սահմանափակ օջախների առկայություն
9. բթության հորիզոնական գիծ